ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ՝

«Առաջին ալիքի» Լուրերի եթերում հեռարձակված «Վարչապետի տիկին Աննա Հակոբյանի անակնկալը Գյումրիի «Երեխաների տուն» մանկատան սաներին» վերնագրով ռեպորտաժի վերաբերյալ իրավապաշտպան Զարուհի Հովհաննիսյանի բողոքի կապակցությամբ.

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը, քննելով Զարուհի Հովհաննիսյանի դիմումը, ուսումնասիրելով խնդրո առարկա տեսանյութը եւ պարզաբանումներ ստանալով Հանրային հեռուստաընկերությունից, արձանագրում է, որ՝

• Ռեպորտաժը պատրաստելուց առաջ լրագրողը/ լրատվամիջոցը ստացել է երեխաների խնամակալի, տվյալ դեպքում՝ հաստատության ղեկավարի համաձայնությունը։
• Տեսանյութում պարզորոշ ի ցույց են դրվում երեխաների առողջական վիճակը եւ առանձնահատկությունները։ Դա կարող էր արվել ներառականության սկզբունքին եւ հասարակության մեջ երեխաների ինտեգրման նպատակին համապատասխան։ Սակայն, թեեւ տեսանյութում պատմվում է երեխաների դրական զգացմունքների, իրականացված ցանկությունների մասին, իսկ լրագրողի օգտագործած բառապաշարում չկան խտրական կամ վիրավորական ձեւակերպումներ, այդուհանդերձ, ռեպորտաժում առկա են երեխաների անօգնականությունն ու խոցելիությունը (ինքնուրույն ուտելու, ինքնուրույն տեղաշարժվելու անկարողությունը) ի ցույց դնող կադրեր, ինչը համահունչ չէ երեխայի լավագույն շահի պաշտպանության սկզբունքին եւ հակասում է Կանոնագրի 4.3. կետով սահմանված պարտավորությանը։
• Ինչ վերաբերում է ռեպորտաժում վարչապետի տիկին Աննա Հակոբյանի չափազանց ներկայության խնդրին, ապա ԴՄ-ն հորդորում է լրատվամիջոցներին, մասնավորապես Հանրային հեռուստաընկերությանը՝ հանրային գործիչների մասնակցությամբ բարեգործական կամ սոցիալական ակցիաներն ու միջոցառումները լուսաբանել այնպես, որ հանրային գործչի ներկայությունը չգերադասվի, եւ չխամրեցվի ակցիայի բուն սոցիալական նշանակությունը։ Այլապես, ողջամիտ տպավորություն է ստեղծվում, որ լրագրողական նյութը ոչ թե հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների մասին է, այլ հանրային գործչի (տվյալ դեպքում՝ վարչապետի տիկնոջ) գործունեության գովերգման։
• Դիտորդ մարմինը հորդորում է Հարային հեռուստաընկերությանը եւ բոլոր լրատվամիջոցներին՝ խոցելի վիճակում գտնվող երեխաների մասին նյութեր պատրաստելիս հնարավորինս խորհրդակցել ՄԻՊ գրասենյակի եւ երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ եւ հետեւել համապատասխան ուղեցույցներին։

16.07.2024 թ.